

## **Մենք թույլ չենք տա, որ հարաբերությունների կարգավորումը պայմանավորվի երրորդ կողմի՝ Ադրբեջանի շահերով:**

**-Պարոն Քոչարյան, նկատել եմ, որ արտգործնախարարությունը բավականին ծանրաբեռնված է աշխատում: Դա այդպե՞ս է, և ի՞նչ աշխատանքներ են տարվում այնտեղ:**

-Այո՛, արտգործնախարարությունը բավականին ծանրաբեռնված է աշխատում, և անելիքներն, իրոք, շատ են: Դա բնորոշ է արտաքին գործերի գերատեսչություններին, քանի որ լուծման ենթակա բազմաթիվ ընթացիկ խնդիրներ կան: Դրան կգումարեի լրացուցիչ խնդիրներ՝ պայմանավորված ՀՀ արտաքին քաղաքականության նախաձեռնողականությամբ:

**-Նախարարության աշխատանքային թիմն այնպիսի՞ն է, որ կարողանա այդ բեռի տակից դուրս գալ, քանի որ այն խնդիրները, որոնք նախագահն ուղղորդում է, ճակատագրական և վճռորոշ են մեր երկրի ապագայի համար:**

-Արտգործնախարարությունում շատ բարձր որակի մասնագետներ կան, ովքեր ունեն աշխատանքային մեծ փորձ և ի վիճակի են իրականացնել իրենց առջև դրված խնդիրները: Բայց դա ամենևին չի նշանակում, որ մենք պետք է ամփոփովենք մեր գերատեսչության շրջանակներում և չհենվենք մաս փորձագետների կարծիքի, տարբեր ոլորտների մասնագետների կարծիքի վրա: Այս առումով տարբեր հարցերի շուրջ հաճախ խորհրդակցում ենք մաս փորձագետների և վերլուծաբանների հետ:

**-Պարոն Քոչարյան, այսօր շատերը պնդում են, որ նախագահ Ս. Սարգսյանի այցը Լոնդոն կարելի է պատմական համարել: Ո՞րն էր այդ այցի նպատակը: Ե՛վ քաղաքական, և՛ դիվանագիտական առումով այն ի՞նչ կտա Հայաստանի Հանրապետությանը:**

-Նախագահի այցի մի քանի նպատակ ունեն: Առավել նշանավոր իրադարձությունը Միացյալ Թագավորության թագուհու հետ հանդիպումն էր և «Չեթն Հաուզ»-ի ելույթը: Ըստ էության, նախագահն իր ելույթում տվեց մեզ համար սկզբունքային հարցերի պատասխանները՝ կապված և՛ ԼՂՀ հարցի կարգավորման հանգուցալուծման, և՛ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետ: Այդ ամբիոնից աշխարհին մեր սկզբունքային մոտեցումների մասին հստակ հայտարարելը չափազանց կարևոր իրադարձություն էր:

**-Նախագահի ելույթի մեջ կար մաս վեկտոր եվրոպական և աշխարհի խոշոր պետություններին՝ իրենք ինչո՞ւ չեն հետևում, թե ուր են գնում իրենց գումարները, որոնցով նավթ են գնում: Նա մաս նշեց, որ Ադրբեջանը զինվում է այդ գումարներով: Ինչպե՞ս կրնկալի համաշխարհային հանրությունը, կոպիտ ասած, այս մեղադրանքները: Թե՞ դա մեղադրանք չէր:**

-Դա մեղադրանք չէր, այլ ընդամենը մատնանշում էր, որ այն շահերը, որ իրենք ունեն, պահանջում են կայունություն տարածաշրջանում: Ի վերջո, նույն նավթ գնողը և գումարներ

Ներդնողը պետք է շահագրգիռ լինեն կայունության պահպանման հարցում: Այդ փաստերը մենք հնչեցնում ենք նաև այլ ձևաչափերով:

**-Հետևություններ անելու՞ են նավթ գնող երկրները:**

-Մենք մեզ համար հետևություններ վաղուց արել ենք և պատրաստ ենք սցենարի ցանկացած զարգացման: Բայց չեն կարծում, որ նախագահի ելույթի այդ հատվածն անուշադրության մատնվի:

**-ՀՀ նախագահը Լոնդոն մեկնելու ճանապարհին, երբ Թուրքիայի օդային տարածքով էր անցնում, ուղերձ հղեց Թուրքիայի նախագահին, վերջինս էլ պատասխանեց: Ինչպե՞ս եք գնահատում այդ քայլը, և դիվանագիտական գնահատականով՝ ինչպե՞ս է այն բնորոշվել:**

-Եվս մեկ անգամ շեշտվեց այն հանգամանքը, որ հայկական կողմի նախաձեռնությամբ է ընթանում ամբողջ գործընթացը, և մենք թույլ չենք տալիս, որ այն դուրս գա այն շրջանակներից, որոնց շուրջ եղել են պայմանավորվածությունները: Մենք նախաձեռնել ենք երկու հարևան ժողովուրդների միջև բնականոն և քաղաքակիրթ հարաբերությունների հաստատման գործընթաց և հայտնվել ամբողջ աշխարհի ուշադրության կենտրոնում: Կարևոր հանգամանք է նաև այն, որ նախագահի ուղերձում նշվում է, որ մենք ըստ պայմանավորվածությունների ընթանում ենք առաջ: Պատահական չէ, որ Թուրքիայի նախագահի պատասխանը չափազանց կոռեկտ էր, գրեթե որևէ ենթատեքստ չէր պարունակում և, ըստ էության, դա այն պատասխանն էր, որ նա պետք է տար նմանատիպ ուղերձ ստանալուց հետո: Սա ևս մեկ դրական ազդակ տվեց:

Հոռետեսության մեծ ալիք բարձրացավ այն պահից, երբ թուրքական կողմը փորձեց իր իսկ կողմից առաջ քաշվող նախապայմանները, ձգձգումները պայմանավորել կամ մեղքը բարդել Հայաստանի վրա՝ կապված Սահմանադրական դատարանի որոշման հետ: Շատ հոռետեսներ ասում էին՝ տապալվեց ամեն ինչ, բայց դրան հետևեցին շատ հետաքրքիր հայտարարություններ և՛ Վաշինգտոնից, և՛ Մոսկվայից, և՛ Եվրոպայից, որ պետք չէ Սահմանադրական դատարանի որոշման մեջ նախապայմաններ փնտրել: Դա որոշում էր, որը ճանապարհ է բացել: Մյուս կողմից՝ մենք ցույց ենք տալիս, որ թույլ չենք տա՝ շեղվի գործընթացը: Կա երկու շեղում, որ մեզ համար անընդունելի են.

1. փորձել գործընթացը օգտագործել ցեղասպանության եղելության հարցը կասկածի տակ դնելու համար,

2. փորձել այդ գործընթացը կապել երրորդ երկրի՝ Ադրբեջանի շահերի հետ:

**-Շատերը պնդում են, որ հայ-թուրքական հարաբերությունները մտնում են փակուղի, և Թուրքիան սահմանը չի բացելու: Իրականում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացն ի՞նչ փուլում է այսօր, և ի՞նչ զարգացումներ կարող են լինել:**

-Սա այն դեպքն է, երբ չարժե կանխատեսել, ուղղակի ես կարող եմ հիշեցնել նախորդ փորձը: Նախքան արձանագրությունները Ցյուրիխում ստորագրելը, Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների շուրթերից հնչում էր, որ մինչև դարաբաղյան հարցում չլինի առաջընթաց, նրանք չեն ստորագրելու, բայց ստորագրեցինք: Հիմա մոտավորապես նմանատիպ մի իրավիճակ է: Կարծում են, որ, այնուամենայնիվ, շատ դժվար կլինի

թուրքական կողմին դուրս գալ այս գործընթացից: Սա բացառիկ դեպք է, երբ տեսնում ենք, որ Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Եվրոպան, աշխարհի գրեթե բոլոր պետությունները շահագրգիռ են նույն հարցի կարգավորման գործում:

**-«Եվրոնյուզ»-ին տված հարցազրույցում Էրդողանն այնքան հստակ է խոսում, որ ցանկացած գործընթաց իրենք կարող են և՛ սկսել, և՛ հետ կանգնել դրանից, և՛ նորից սկսել, եթե իրենց շահերից չի բխում: Ինչո՞ւ եք կարծում, որ Թուրքիան չի կարող դուրս գալ գործընթացից:**

-Նա միշտ էլ կարող է դուրս գալ գործընթացից, բայց դրա համար պետք է ունենալ որոշակի բացատրություն: Գործընթացը տապալելու պատասխանատվությունը Թուրքիայի վրա է ընկնելու՝ իր բոլոր հետևանքներով:

**-Այսինքն՝ պետք է ընդունել, որ գնդակը Թուրքիայի դաշտում է, և նա պետք է քայլ անի:**

-Ավելին ասեմ, եթե նա փորձում է այդ քայլը չանել, ապա հայկական կողմի վրա այդ պատասխանատվությունը զցելու նրա փորձերը չեն արդարանում: Մենք պետք է գիտակցենք, որ նույնիսկ վավերացմամբ խնդիրները չեն լուծվում: Վավերացումից հետո պետք է կյանքի կոչել արձանագրությունները: Պատահական չէ, որ միջնորդները նույնպես խոսում են ոչ այնքան վավերացման, որքան դրանք կյանքի կոչելու մասին:

**-Նախագահը հայտարարեց, որ Թուրքիայի խորհրդարանի կողմից հայ-թուրքական արձանագրությունների վավերացումից հետո կվավերացնի Հայաստանի խորհրդարանը: Ինչո՞ւ ենք մենք անպայման սպասում Թուրքիայի խորհրդարանի վավերացմանը:**

-Դա տրամաբանական մոտեցում է: Քաղաքական այն քննարկումները, որոնք սկսվեցին մեզանում և Թուրքիայում սեպտեմբերին, պետք է սկսվեին դեռ ապրիլին: Նախաստորագրումից հետո թուրքական կողմը սկսեց պայմանավորվածություններին հակառակ հայտարարություններ անել, որից հետո եղան հայտարարություն ճանապարհային քարտեզի մասին, բանակցություններ կողմերի հետ և, ի վերջո, ուշացում: Ո՞վ էր մեղավորը. ակնհայտ է, որ թուրքական կողմը: Երբ Ցյուրիխում ստորագրվում էին արձանագրությունները, հատուկ արարողություն էր նախատեսված ազդեցիկ պետությունների և կառույցների բարձրաստիճան անձերի մասնակցությամբ, այդ ամենը ձգձգվեց միայն մեկ պատճառով, որ թուրքական կողմը փորձեց ստորագրումից հետո իր ելույթում որոշ ձևակերպումներ առաջ քաշել, ինչը, բնական է, մենք չէինք կարող թույլ տալ:

**-Այս ամենը մեր դիվանագիտական հաջողության արդյո՞ւնքն էր:**

-Կարելի է ձևակերպել հաջողություն, բայց ես կարծում եմ, որ այդ ամենը ցույց է տալիս, որ մենք եղել և մնում ենք սկզբունքային, որ մենք չենք գնա քայլերի՝ ի հաշիվ մեր արժանապատվության և արժեքների: Թուրքական կողմի նմանատիպ վարքագիծը, որի շարունակությունն էին փորձերը ՍԴ-ի որոշումն օգտագործել որպես առիթ իր կողմից գործընթացի ձգձգումը արդարացնելու համար, ապացուցեցին որ հայկական կողմն ավելի վստահելի է. նրա խոսքն ու գործը համընկնում են, ինչը բնորոշ չէ թուրքական կողմին:

-Կուզենայի՝ այս հարցին որպես քաղաքական գործիչ պատասխանեք: Մենք բոլորս էլ հասկանում ենք, որ թուրքերի մեջ պանթուրքիզմի գաղափարները և դրանց իրականացումն ամեն դեպքում կա, հետևաբար, եթե նրանք այդպիսի ձգտումներ ունենան, Հայաստանն իրենց ծրագրերի մեջ երկարաժամկետ չի կարող մտնել: Հետևաբար, արժե՞ հարաբերություններ կարգավորել մի պետության հետ, որն իր հոգու խորքում քեզ չի հարգում: Մյուս կողմից էլ՝ մենք հարևաններ ենք և չենք կորչելու այս տարածաշրջանից:

-Նախ՝ պետք է նշեն, որ պանթուրքիզմի գաղափարախոսությունը ձևափոխվում է, նոր բովանդակություն է ստանում, օրինակ, նեոսունիզմի տեսքով: Դա ենթադրում է իրականացման այլ մեխանիզմներ՝ ոչ թե Օսմանյան կայսրության վերականգնում, այլ նախկին կայսրության տարածքում ազդեցության տարածում, այդ թվում՝ տնտեսական ազդեցության: Բնական է, որ այս պարագայում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների չկարգավորված լինելը խանգարում է իրենց իսկ ծրագրերի իրականացմանը: Այսինքն՝ արտաքին քաղաքականությունը կառուցվում է փոխադարձ շահերի վրա, դու պետք է գիտակցես ոչ միայն քո, այլ նաև մյուս կողմի շահերը: Կարգավորումը հնարավոր է, եթե երկու կողմն էլ իրոք շահագրգիռ են:

#### **-Ի՞նչ եք կարծում, սահմանը խելամիտ ժամկետում կբացվի՞:**

-Եկեք ճիշտ հասկանանք. խնդիրը միայն սահմանի պաշտոնական բացումը չէ: Դրանից հետո լուրջ աշխատանք է սպասվում՝ կապված բեռնափոխադրումների համար նավահանգիստների օգտագործման, երկաթգծի վերագործարկման, էներգետիկ ենթակառուցների աշխատանքի ներդաշնակեցման և բազմաթիվ այլ խնդիրների հետ:

#### **-Մինչև ապրիլի 24-ը սահմանը կբացվի՞:**

-Դա ցույց կտա ժամանակը: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը մենք չենք կապում ո՛չ ցեղասպանության միջազգային ճանաչման, ո՛չ էլ ապրիլի 24-ի հետ:

-Ինչո՞ւ ժողովրդավարական արժեքներ քարոզող Եվրոպան չի կարողանում հասկանալ, որ սուլթանական Ադրբեջանը չի կարող տիրել ԼՂՀ-ի նման ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող պետությանը: Երևի թե կհամաձայնեք, որ Արցախն ավելի ժողովրդավարական պետություն է, քան Հայաստանը:

-Ես չեմ ասի, որ միջնորդները ենթադրում են հարցի այնպիսի լուծում, որ ԼՂՀ-ն կրկին հայտնվի Ադրբեջանի կազմում:

-Այսօր ժամանակը չէ՞, որ մեր դիվանագիտությունը կարողանա ապացուցել, որ Արցախը կայացած պետություն է, և ամոթալի է քննարկել այդ պետության կարգավիճակի հարցը:

-Իրականում դա առաջին հերթին ապացուցում է ինքը Արցախը՝ իր կայացած պետական կառույցներով, իրավական համակարգով, խորացող ժողովրդավարական ավանդույթներով: Որքանով ԼՂՀ-ն դուրս գա տեղեկատվական շրջափակումից, այնքանով տեսանելի կլինեն նրա հաջողությունները, իսկ այդ դուրս գալն արդեն տեղի է ունենում: Պատահական չէ, որ Ադրբեջանին անչափ նյարդայնացրեց ԼՂՀ մարդու իրավունքների

պաշտպանի անդամակցությունը եվրոպական մարդու իրավունքների պաշտպանների կազմակերպությանը:

**-Այսօր խոսակցություններ կան, որ Ռուսաստանը պարտադրում է, որ Ղարաբաղի հարցն արագ լուծվի: Ռուսաստանի կողմից կա՞ ճնշում Հայաստանի և Ադրբեջանի վրա, որպեսզի այդ հարցն արագորեն լուծվի:**

-Ե՛վ Ռուսաստանը, և՛ համանախագահ մյուս երկրները բազմիցս արտահայտել են իրենց դիրքորոշումը. իրենք շահագրգիռ են, որպեսզի այս հարցը լուծվի, բայց իրենք ոչ թե պարտադրում են լուծման եղանակ, այլ ձգտում են և օժանդակում, որ կողմերը գան համաձայնությունների, և իրենք կդառնան դրանց իրագործման երաշխավորը:

**-Լուծում ունի՞ այս հարցը:**

-Լուծումն այն է, որ Ադրբեջանը պետք է իրատեսական մոտեցում ցուցաբերի, իսկ նա մնում է իր իրականությունն աղավաղող քարոզչության գերին:

**-Այսօր ամբողջ աշխարհը խոսում է Իրանի միջուկային նկրտումների մասին: Իրանը հստակ հայտարարում է, որ միևնույնն է, իրենք ունենալու են միջուկային էներգիա: Իրանի նախագահը հայտարարել է, որ իրենք արդեն միջուկային գերտերություն են: Ի՞նչ է լինելու այս ամենի վերջը: Արդյո՞ք ԱՄՆ-ն ռազմական ճանապարհով կմտնի Իրանի տարածք, և, ընդհանրապես, այստեղ Հայաստանի շահը ո՞րն է: Մեզ պե՞տք է, որ մեր հարևան պետությունը դառնա միջուկային գերտերություն:**

-Առաջին հերթին մեզ կայունություն է պետք, մեզ պետք չէ, որ Իրանում իրարանցումներ լինեն: Ժամանակին կային տեսություններ, որոնց առ այսօր կողմնակիցներ կան, որ աշխարհի զարգացումը քաղաքակրթությունների բախումն է, այլ ոչ՝ երկխոսությունը: Հայաստանի և Իրանի հարաբերությունները քաղաքակրթությունների երկխոսության լավ օրինակ են: Մենք պետք է բարձր գնահատենք այդպիսի երկխոսության հիմք հանդիսացող մեր պատմամշակութային ժառանգության հանդեպ Իրանի Իսլամական Հանրապետության իշխանությունների հոգատար վերաբերմունքը: Իր հերթին նորանկախ Հայաստանի առաջին քայլերից էր իրանական մասնագետների ուժերով Երևանում պարսկական մզկիթի վերականգնումը:

**-Ինչպիսի՞ կանխատեսումներ կան, Իրանի տարածքում ռազմական գործողություններ կլինե՞ն:**

-Առաջին տարին չէ, որ այդ մասին խոսվում է: Կարծում եմ՝ Իրանի ղեկավարությունը բաց է երկխոսության համար: ԱՄՆ-ի ներկա վարչակազմն էլ, ի տարբերություն նախորդի, հակված է երկխոսության: Կա հնարավորություն խնդիրները լուծելու փոխհամաձայնության ճանապարհով: Հայաստանը շահագրգռված է, որ տարածաշրջանը լինի խաղաղ:

**Սուսաննա Թամազյան**